Այնտեղ բացւում է մի ոսկեայ դուռ եւ մարդուն ներս է տանում բիւրեղեայ հրաշալի ապարանքի մէջ: Այնտեղ մարջանի (բուստի) մշտադալար ծառերի ներքոյ ճեմում են յաւէրժական հիւրիներ, փէրիներ, աւելի պայծառ, քան նոր ծագող արեգակը իր վարդակարմիր ճառագայթներով: Այնտեղ «հազարան բլբուլը» կերակրւում է մարգարիտներով եւ, փղոսկրեայ վանդակի մէջ, ամէն մի րոպէում վախում հազարաւոր եղանակներ, հազարաւոր նոագներով: Նրա երգի ձայնից անուշահոտ վարդենիները գտնւում են մշտական զմայլմունքի մէջ: Այնտեղ արարածները չեն ծերանում, այլ վայելում են յաւէրժական սէր եւ մանկութիւն: Բայց բիւրեղեայ ապարանքի ոսկեայ դուռը ամէնի առջեւ չէ բացւում, որովհետեւ նա կախարդած է եւ խորհրդաւոր թիլիսման ունի: Մի ծերունի դերվիշ, որ աչքով տեսել է այդ բոլորը, խոստացել է տալ ինձ այդ թիլիսմանը»:

Ասլանը ժպտաց թուրք հնագէտի միամտութեան վրայ: Նրա ցոյց տուած հօրը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ այն հին, ստորերկրեայ անցքերից մէկը, որ մի ժամանակ ծառայել է կամ որպէս փախուստի ճանապարհ, կամ հաղորդակցութիւն է ունեցել ուրիշ ամրութիւնների հետ, որոնք շատ հեռու չեն բերդից: Այս տեսակ հորեր շատ էին երեւում: Կարծես քարափի մթին խորքերում մի հսկայական մրջնանոց լինէր իր բազմաթիւ խորշերով եւ իր բազմաթիւ խոռոչներով, ուր մարդիկ երբեմն գործել են: Բայց իմ ուշադրութիւնը գրաւեցին երեսանից աւելի մեծ եւ փոքր այրեր ու ընդարձակ քարանձաւներ, որոնք նոյնպէս փորուած էին քարափի մէջ, որոնց մի քանիսի մէջ մենք կարողացանք ներս մտնել: Նրանց վրայ երեւում էր ժամանակի արհեստն ու ճարտարութիւնը, եւ շատերը նրանցից զարդարած էին սեպաձեւ արձանագրութիւններով:

— Աւանդութիւնը, — ասաց Ասլանը, — այս բերդը եւ այս այրերը Շամիրամին են ընծայում, որպէս թէ նինոէացի թագուհու գանձատունը, մթերանոցները, պահեստի տեղերը եւ բաղանիքները լինէին: Իսկ այդ բոլորը աւելի հին է, քան թէ Շամիրամը, թէեւ մեր ծերունի Խորենացին հնագիտական միամտութեամբ նոյնպէս նրան է ընծայում:

— Ի՞նչ է ասում Խորենացին, — հարցրի ես խորին հետաքրքրութեամբ:

Կարծես Ասլանը Խորենացու գիրքը այնպէս սերտած լինէր, որպէս ես Սաղմոսը. նա անգիր կարդաց պատմութիւնից այն տեղը, որ այդ բերդին էր վերաբերում, յետոյ աշխարհաբար թարգմանեց ինձ.

— «Իսկ անձաւի արեւահայեաց կողմը, այնպիսի նիւթի կարծրութեան մէջ, ուր մէկը այժմ եւ ոչ մի գիծ երկաթով փորել կարող է (Շամիրամը), պէսպէս տաճարներ, օթեւանների սենեակներ, գանձերի տներ եւ երկար այրեր